Եղիշե Չարենց

Վարսավիրի հմայքներ

Վարսավիրի մոտ հիմա նա լուռ նստել է էլի.
Դեմը փայլում է հսկա արծաթափայլ հայելին:
Դեմը նստել է մի կին ու աչքերով մեռելի
Նայում է պաղ աչքերին՝ անվերջ, էլի ու էլի:
Թափել է վար, ճակատին դեղին մազերը հիմա,
Ու ակնարկում է մթին տագնապներով ակամա:
Այնպես օտա՛ր է, այնպես անսիրելի ու հեռու.
Ի՞նչ են գտել նրա մեջ գուրգուրելու, սիրելու:
Տխո՛ւր, տխո՛ւր, որպես մահ, ակնարկում է հայելին.
Սանրվում է սակայն նա, դեմքը ժպտում է էլի:
Ու կանգնել է իրեն մոտ մոտի՛կ, մոտի՛կ, որպես սեր
Մի բարեկամ անծանոթ, հրաշագործ մի ընկեր:
Դեմքին տաղտուկ մի ժպիտ, ձեռքին սրվակ ու փոշի՝
Թափում է նո՛ւրբ հմայքներ, ծախվող բույրեր ուրիշի:
Հարազատ է այնքան այդ զրնգունը մկրատի.
Ի՞նչ է ուզում սակայն ծեր, չար ժամացույցը պատի:
Նա ինչո՞ւ է աղմկում, որպես տաղտուկ թշնամի
Սուր զարկերով իր բեկուն՝ հարվածների պես գամի:
...Մոգ-վարսավիրը սակայն թափում է նուրբ հմայքներ
Ու էլ դեմքով դյութական՝ ահա ելնում է նա վեր:
Ո՞ւմ ինչ, որ նա էլ հիմա ինքն իրեն չի ճանաչի
Ու ժպիտով ակամա պիտի գերի ու խաչի:
Ես պոետ եմ ու գիտեմ, որ աշխարհում այս նսեմ,

Ճշմարիտ է միայն այդ ամոքող սուտը լուսե:
Սուրբ է կյանքում միայն դա՛ ամոքող փայլը ստի.
Օ, պչրուհի՛, հավատա՛ երազներին պոետի...